15903

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան
« 01 » 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0222-23

Ձեռնարկողը՝ ***«ԱՐԾԱԹԵ ԲԱՆԱԼԻ» ՍՊԸ***
Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Լուսավորչի փող., 6-րդ նրբ., տուն 4

Գործունեությունը՝ ***«Արծաթե բանալի» բազալտների երևակման 1-ին և 2-րդ փեղամասերի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0222-23

«01» դեկտեմբերի 2023թ.

«Արծաթե բանալի» բազալտների երևակման 1-ին և 2-րդ տեղամասերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՐԾԱԹԵ ԲԱՆԱԼԻ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Բանդիվան բնակավայր

Ներածական մաս. Շիրակի մարզի «Արծաթե բանալի» բազալտների երևակման 1-ին և 2-րդ տեղամասերում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների համար ընտրված տարածքը գտնվում է Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի Բանդիվան բնակավայրի վարչական տարածքում:

Հետախուզվող տեղամասը գտնվում է Ամասիա քաղաքից շուրջ 3 կմ հեռավորության վրա: Բանդիվան գյուղից մոտ 1կմ դեպի արևելք: Հայցվող տարածքի մակերեսը կազմում է 27,5 հա:

Հայցվող տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել օգտակար հանածոյի քանակական և որակական հատկությունները և դրանց պիտանելիությունը որպես երեսպատման և շինարարական քար, որը կհամապատասխանի “Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-стрительных, мемориальных и других изделий” 9479-2011 ГОСТ-ի և «Ավազ շինարարական աշխատանքների համար» ГОСТ 8635-2014 տեխնիկական պահանջներին համապատասխանող վերջնարտադրանքների ստացմանը: Համաձայն “Инструкция по применению классификации запасов к место-рождениям строительного и облицовочного

камня" հրահանգի, տեղամասն ըստ երկաբանական կառուցվածքի բարդության վերագրվում է 1-ին խմբին:

Հայցվող տեղամասերի ծայրակետերի կոորդինատները՝ ARM WGS-84 կոորդինատային համակարգով:

1-ին տեղամաս		
1	8400431	4536139
2	8400444	4536453
3	8400863	4536500
4	8400796	4536173
	S=12,40հա	
2-րդ տեղամաս		
1	8401160,40	4536384,700
2	8401301	4536565
3	8401625	4536445
4	8402179	4536350
5	8401986,30	4536210
	S=15,09 հա	

«Արծաթե բանալի» հետախուզվող տեղամասում բազալտները խորքում հետախուզելու նպատակով նախատեսվում է հորատել մինչև 15մ խորությամբ 18 հորատանցք, ընդհանուր 270գծ.մ մոտավոր ծավալով: Հորատումն իրականացվելու է ինքնաշարժ հորատող հաստոցներով կարծր համաձուլվածքի թագիկներով:

Հորատման աշխատանքները կիրականացվեն մասնագիտացված մասնավոր կազմակերպությունների կողմից պայմանագրային հիմունքներով: Այդ աշխատանքներով պետք է ապահովեն օգտակար մարմնի համապատասխան տիրույթից նվազագույնս 90% հորատահանուկի ելք:

Պիտանի բլոկների ելքի տոկոսը որոշելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել փորձնական բացահանքի անցում թարմ ապարների մեջ: Փորձնական բացահանքի չափերն են՝ մակերեսը 40մ^2 իսկ ծավալը 100մ^3: Փորձնական հանույթը պետք է կատարվի առանց պայթեցման աշխատանքների, հորատասեպային եղանակով: Լեռնային զանգվածը 100մ^3 ծավալով տեղափոխվելու է քաղաք Ամասիա (3.0կմ հեռավորության վրա հանքավայրից), KAMAZ մակնիշի բեռնատար ավտոմեքենայով:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալներն են. 270գծ.մ հորատանցքեր և 20գծ.մ փորձնական բացահանք, ընդամենը 290գծ.մ:

Օգտակար հանածոյի որակական, ֆիզիկամեխանիկական, քիմիական և պետրոգրաֆիական հատկությունների որոշման նպատակով բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային մենակտորային նմուշարկման: Հորատանցքերը կենթարկվեն համատարած և կետային (ընդհատվող տիրույթներով) նմուշարկվող առավելագույնը 5մ երկարությամբ հանուկային նմուշներով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Նախատեսվում է 54-նմուշների ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրություն, 2-ական նմուշների քիմիական և պետրոգրաֆիական ուսումնասիրություն և 2 նմուշ ճառագայթահիգիենիկ ուսումնասիրության համար:

Կկառուցվի 18 հորատման հարթակ մեխանիկական եղանակով, 4-րդ կարգի ապարներում: Մեկ հորատման հրապարակի մակերեսը կկազմի 48մ^2: Ընդհանուր մակերեսը կկազմի 864մ^2, ծավալը 172.8մ^3:

Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների՝ ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար:

Մոտակա ջրային մարմինը՝ Ախուրյան գետի ձախ վտակը, գտնվում է հայցվող տարածքից հարավ, ամենամոտ կետը մոտ 200մ հեռավորության վրա:

Աշխատակիցների կենցաղային կարիքների համար անհրաժեշտ խմելու ջուրը կբերվի մոտակա Ամասիա համայնքից, իսկ տեխնիկական նպատակներով ջրառը կիրականացվի մոտակա Գյումրի համայնքից՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը նախատեսվում է կուտակել նախապես կառուցված, բետոնապատ անթափանց ջրհորի մեջ:

Ըստ հայտում եղած տեղեկատվության հայցվող տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն հանդիպում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում բնության և պատմության հուշարձաններ հաշվառված չեն, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Մոտակա բնության հուշարձանները գտնվում են հայցվող տարածքից մոտ 3.4կմ հեռավորության վրա:

Պատմամշակութային հուշարձաններով զբաղեցրած հողակտորները գտնվում են հայցվող տարածքից 5.85կմ հեռավորության վրա:

Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, անհրաժեշտության դեպքում կատարվելու է դրանց բարեկարգում:

-Աղմուկի մակարդակը Բանդիվան գյուղի մոտ կկազմի 15դԲԱ:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հորատահարթակների մակերեսից: Հողաբուսածածկի շերտը վերականգնվում է 0.2մ խորության վրա: Աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Փորձնական բացահանքի մակերեսը կազմում է 40մ^2: Վերականգնման ենթակա մակերեսը կազմում է 904մ^2: Վերականգնման ծավալը կկազմի 180,8մ^3: Վերականգնումն իրականացվելու է ձեռքով III կարգի գրունտներով: Ռեկուլտիվացիայի գումարը կկազմի՝ 108480 ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը:

-Ավտոինքնաթափի և բուլդոզերի շարժիչների վրա պետք է տեղադրվեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ:

-Մերձատար ճանապարհը, հորատման վայրերը և փորձնական բացահանքի տարածքը կջրցանվի, ինչը թույլ է կտա կրճատել փոշու արտանետումները:

-Կենցաղային կեղտաջրերը պետք է հավաքվեն անթափանց հորի մեջ: Հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության ուժերով:

-Փորձնական բացահանքի տարածքից միջինը 0.2մ հզորությամբ հողերի բերրի շերտը կհեռացվի, կկուտակվի բացահանքի հարակից մասում:

– Խախտված տարածքների ռեկուլտիվացիան կկատարվի երկու փուլով: Նախ հետ կլցվեն, կփռվեն և կհարթեցվեն ջարդոտված, փուշտա շերտի բազալտները, այնուհետև կփռվի հողաբուսական շերտը: Կկատարվի պարարտացում հնեցված գոմաղբով և կցրվեն ցորնուկային ֆորմացիայի բազմամյա բույսերի սերմեր:

- Չտեսակավորված կենցաղային աղբը կտեղափոխվի աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով, կկնքվի սպասարկման պայմանագիր ծառայություն մատուցող կազմակերպության հետ:

-Աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների վրա կտեղադրվեն հատուկ ձայնամեկուսիչ պատյաններ:

-Կօգտագործվեն մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին:

Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ:

-Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:

-Ստորերկրյա և մակերևութային ջրերի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

-Վայրի բնության, կենսամիջավայրի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 200 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, «Արծաթե բանալի» բազալտների երևակման 1-ին և 2-րդ տեղամասերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Շիրակի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
-Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արծաթե բանալի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի «Արծաթե բանալի» բազալտների երևակման 1-ին և 2-րդ տեղամասերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան